

Հարց

«Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» օրենքով սահմանված կարգով հավաստագիր ունեցող հարկ վճարողի մոտ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող վարձու աշխատողի ժամանակավոր անաշխատունակության նպաստի գումարից ի՞նչ դրույքաչափով է պահվում եկամտային հարկը:

Պատասխան

«Եկամտային հարկի մասին» օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1.1-ին կետի համաձայն՝ «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» օրենքով սահմանված կարգով հավաստագրված հարկ վճարողը հավաստագրի տրամադրման ամսվան հաջորդող ամսվա 1-ից մինչև հավաստագրի գործողության ժամկետի ավարտն աշխատողներին վճարվող աշխատավարձից և դրան հավասարեցված եկամուտներից եկամտային հարկը հաշվարկվում է 5 տոկոս դրույքաչափով:

Քանի որ ժամանակավոր անաշխատունակության նպաստի գումարը աշխատավարձ և դրան հավասարեցված եկամուտներին չի դասվում, հետևաբար այդ գումարի նկատմամբ եկամտային հարկը հաշվարկվում է 14 տոկոս դրույքաչափով:

Հարց

ԱՀ-ում հաշվառված կազմակերպությունը «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» օրենքով սահմանված կարգով հավաստագրվել է: Կազմակերպության աշխատակիցներից մեկը օտարերկրյա քաղաքացի է, որի հետ կնքվել է աշխատանքային պայմանագիր՝ որպես ծրագրավորող: Վերջինս աշխատանքներն իրականացնում է իր բնակության վայր հանդիսացող օտարերկրյա պետությունից և հանդիսանում է ԱՀ-ում կացության կարգավիճակ չունեցող օտարերկրյա քաղաքացի: Նշյալ օտարերկրյա մասնագետի համար կիրառելի է արդյո՞ք «Եկամտային հարկի մասին» օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1.1-ին կետով՝ «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» օրենքով սահմանված կարգով հավաստագրված հարկային գործակալի կողմից հավաստագրի գործողության ժամկետում աշխատողներին վճարվող աշխատավարձից և դրան հավասարեցված եկամուտներից եկամտային հարկի հաշվարկման համար նախատեսված 5 տոկոս դրույքաչափը:

Պատասխան

«Եկամտային հարկի մասին» օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1.1-ին կետի համաձայն՝ «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» օրենքով սահմանված կարգով հավաստագրված հարկ վճարողը հավաստագրի տրամադրման ամսվան հաջորդող ամսվա 1-ից մինչև հավաստագրի գործողության ժամկետի ավարտն աշխատողներին վճարվող աշխատավարձից և դրան հավասարեցված եկամուտներից եկամտային հարկը հաշվարկվում է 5 տոկոս դրույքաչափով: Նույն օրենքի 12-րդ հոդվածով կարգավորվում են օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց եկամտային հարկի դրույքաչափերը, համաձայն որի՝ օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն

չունեցող անձանց արցախյան աղբյուրներից վճարվող աշխատավարձից և դրան հավասարեցված եկամուտներից նույն օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված դրույքաչափով (2022 թվականի համար՝ 14 տոկոս):

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ օտարերկրյա աշխատակիցը ծրագրավորման աշխատանքներն իրականացնում է իր բնակության վայր հանդիսացող օտարերկրյա պետությունից և չունի ԱՀ-ում կացության կարգավիճակ, ուստի նույն օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ 14 տոկոս դրույքաչափով հարկային գործակալի պահած (գանձած) գումարները համարվում են ԱՀ-ում օտարերկրյա քաղաքացու համար եկամտային հարկի վերջնական գումար:

Հարց 3

ԱՀ կառավարության 18.01.2021թ. N 9-Ա որոշման համաձայն՝ ռեզիդենտ ոչ պետական կազմակերպություններին և անհատ ձեռնարկատերերին աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների մասով հաշվարկված և վճարված եկամտային հարկի գումարի չափով պետական աջակցության տրամադրման միջոցառման շրջանակում անհատ ձեռնարկատերերի ստացված պետական աջակցության գումարները համարվում են արդյոք եկամտային հարկով հարկվող եկամուտ և արտացոլվում տարեկան եկամուտների մասին հաշվարկում:

Պատասխան

«Եկամտային հարկի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետի համաձայն՝ ԱՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների հիման վրա ֆիզիկական անձանց անհատույց տրված դրամական միջոցները դիտվում են որպես նվազեցվող եկամուտ: Նույն օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ տարեկան եկամուտների մասին հաշվարկում անհատ ձեռնարկատերերը չեն ներառում օրենքով սահմանված նվազեցվող եկամուտները:

Հարց

Ֆիզիկական անձը կազմակերպությանը մատուցել է ծառայություն 300 000 ՀՀ դրամ ընդհանուր արժեքով: Գումարի մի մասը՝ 100 000 ՀՀ դրամ, վճարվել է 2021թ. սեպտեմբեր ամսին՝ կանխավճարային, իսկ մյուս մասը՝ 200 000 ՀՀ դրամ, ծառայությունը մատուցելուց հետո՝ 2021թ. նոյեմբեր ամսին:

Տվյալ դեպքում եկամտային հարկը ո՞ր հաշվետու ժամանակաշրջանի եկամտային հարկի հաշվարկում պետք է արտացոլվի և ե՞րբ վճարվի պետական բյուջե:

Պատասխան

«Եկամտային հարկի մասին» օրենքի 14-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում կատարված աշխատանքների և (կամ) մատուցված ծառայությունների համար ստացվող եկամուտների մասով եկամտային հարկով հարկման օբյեկտի հաշվառումն ու հարկի հաշվարկը կատարվում է հաշվառման դրամարկղային մեթոդով: Նույն օրենքի 15-րդ հոդվածի համաձայն՝ օրենքի 14-րդ հոդվածին համապատասխան հաշվարկված եկամտային հարկը պետական բյուջե է վճարվում ֆիզիկական անձանց եկամուտների հաշվարկման (պասիվ եկամուտների և (կամ) քաղաքացիաիրավական

պայմանագրերի շրջանակներում աշխատանքների կատարման (ծառայությունների մատուցման) դիմաց վճարման) ամսվան հաջորդող ամսվա 20-ից ոչ ուշ:

Ելնելով վերոգրյալից՝ քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում կատարված աշխատանքների և (կամ) մատուցված ծառայությունների համար վճարվող եկամուտների մասով կազմակերպությունը եկամտային հարկի հաշվարկը կատարում է հաշվի առնելով վճարման փաստը, այդ թվում՝ նաև կատարված կանխավճարները դեռ չմատուցված ծառայությունների համար, և այդ եկամուտներն ու հաշվարկված (պահված) եկամտային հարկը արտացոլում այդ եկամուտների վճարման համապատասխան ամսվա եկամտային հարկի հաշվարկում: Տվյալ օրինակում 100 000 ՀՀ դրամ վճարված եկամուտներն ու դրանից հաշվարկված (պահված) եկամտային հարկը կարտացոլվեն սեպտեմբեր ամսվա եկամտային հարկի հաշվարկում՝ եկամտային հարկը վճարելով մինչև 2021թ. հոկտեմբերի 20-ը ներառյալ, իսկ մյուս մասը՝ 200 000 ՀՀ դրամ եկամուտներն ու դրանից պահված եկամտային հարկը, կարտացոլվի 2021թ. նոյեմբեր ամսվա հաշվարկում՝ եկամտային հարկը վճարելով մինչև 2021թ. դեկտեմբերի 20-ը ներառյալ:

Հարց

Ընդհանուր հարկման համակարգով հարկվող անհատ ձեռնարկատերերի համար պարտադիր է, արդյոք, նվազագույն եկամտային հարկի վճարումը:

Պատասխան

«Եկամտային հարկի մասին» օրենքի 11-րդ հոդվածի 8.2-րդ մասի համաձայն՝ 2018 թվականի հունվարի 1-ից հարկման ընդհանուր համակարգում գտնվող անհատ ձեռնարկատերերը վճարում են նվազագույն եկամտային հարկ՝ ամսական 5 000 ՀՀ դրամի չափով՝ յուրաքանչյուր ամսվա համար մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 20-ը (ներառյալ):

Հարց

Հարկվում են, արդյոք, եկամտային հարկով գույքի ապահովագրության գծով ֆիզիկական անձին վճարված ապահովագրական հափուցման գումարները:

Պատասխան.

Ոչ: «Եկամտային հարկի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ ապահովագրական հատուցման գումարները դրանք ստացող ֆիզիկական անձի մոտ հանդիսանում են համախառն եկամտից նվազեցվող եկամուտներ և չեն հարկվում եկամտային հարկով:

Հարց

Ի՞նչ ժամկետում պետք է հարկային գործակալը ներկայացնի գրանցման հայտը՝ վարձու աշխատողին չվճարվող արձակուրդ, մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդ տրամադրելու կամ այդ արձակուրդն ավարտվելու դեպքում:

Պատասխան

«Եկամտային հարկի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Արցախի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ սահմանված՝ վարձու աշխատողին չվճարվող արձակուրդ, մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդ տրամադրելու, այդ արձակուրդն ավարտվելու դեպքում հարկային գործակալը պարտավոր է ներկայացնել գրանցման հայտ մինչև նշված հանգամանքն

առաջանալու (հաշվետու) ամսվա համար եկամտային հարկի ամփոփ հաշվարկը ներկայացնելը:

Հարց

Եկամտային հարկով հարկման առումով ինչպե՞ս են վերահաշվարկվում արտարժույթով սրացված եկամուտները:

Պատասխան

«Եկամտային հարկի մասին» 5-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ֆիզիկական անձանց կողմից արտարժույթով ստացման ենթակա՝ հաշվեգրված (պասիվ եկամուտների, ինչպես նաև անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց մասով՝ քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում ստացված) եկամուտները վերահաշվարկվում են ՀՀ դրամով՝ ելնելով դրանց ստացման իրավունքի ձեռքբերման օրը ՀՀ կենտրոնական բանկի հրապարակած՝ արժույթային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքից:

Հարց

Հարկային գործակալը ֆիզիկական անձանց եկամուտներ վճարելիս ի՞նչ դրույքաչափով է հաշվարկում եկամտային հարկը գրավոր պայմանագիր չկնքելու դեպքում:

Պատասխան

«Եկամտային հարկի մասին» օրենքի 11-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված ձևով գրավոր պայմանագիր չկնքելու կամ ֆիզիկական անձի հետ քաղաքացիաիրավական գրավոր պայմանագիրը (անձնագրի տվյալների և ԼՂՀ-ում բնակության (հաշվառման) հասցեի պարտադիր նշումով) չկնքելու դեպքում հարկային գործակալը ֆիզիկական անձին եկամուտներ վճարելիս (բացառությամբ՝ աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման դիմաց եկամուտներ վճարելիս) եկամտային հարկը հաշվարկում և պահում է 10 տոկոս դրույքաչափով՝ վճարված եկամուտների նկատմամբ՝ առանց հաշվի առնելու նույն օրենքով սահմանված նվազեցումները:

Հարց

Նոր գրանցված անհատ ձեռնարկատերը ո՞ր ժամանակահատվածում կանխավճարների եռամսյակային վճարումներ չի կատարում:

Պատասխան

«Եկամտային հարկի մասին» օրենքի 20-րդ հոդվածի համաձայն՝ նոր գրանցված անհատ ձեռնարկատերը պետական գրանցման տարվա ընթացքում և գրանցմանը հաջորդող տարվա առաջին եռամսյակի համար կարող է կանխավճարների եռամսյակային վճարումներ չկատարել:

Հարց

Եկամտային հարկով հարկման առումով անհատ ձեռնարկատիրոջ համար ե՞րբ է տրկոսների կամ վարձավճարների տեսքով եկամտի սրացման իրավունքը համարվում ձեռք բերված:

Պատասխան

«Եկամտային հարկի մասին» օրենքի 17-րդ հոդվածի համաձայն՝ տոկոսների կամ վարձավճարների տեսքով եկամուտներ ստանալու դեպքում անհատ ձեռնարկատիրոջ համար եկամտի ստացման իրավունքը համարվում է ձեռք բերված պարտքի կամ վարձակալական պայմանագրի ժամկետը լրանալու պահից (եթե պարտքի կամ վարձակալության պայմանագրի ժամկետը ներառում է մի քանի հաշվետու ժամանակաշրջաններ, ապա հաշվետու ժամանակաշրջանում եկամուտը բաշխվում է դրա հաշվեգրմանը համապատասխան):

Հարց

Անհատ ձեռնարկատերերը տարեկան եկամուտների մասին հաշվարկը կարո՞ղ է արդյոք ներկայացնել թղթային տարբերակով:

Պատասխան

«Եկամտային հարկի մասին» օրենքի 22-րդ հոդվածի համաձայն՝ 2014 թվականի հունվարի 1-ից անհատ ձեռնարկատերերի կողմից տարեկան եկամուտների մասին հաշվարկը ներկայացվում է բացառապես էլեկտրոնային եղանակով:

Հարց

Անհատ ձեռնարկատերերը տարեկան եկամուտների մասին հաշվարկի արդյունքներով ե՞րբ է պարտավոր պետական բյուջե վճարել տարեկան եկամտային հարկի գումարը:

Պատասխան

«Եկամտային հարկի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տարեկան եկամուտների մասին հաշվարկի արդյունքներով եկամտային հարկ վճարողը պարտավոր է եկամտային հարկի գումարը վճարել պետական բյուջե տվյալ հարկային տարվան հաջորդող տարվա մայիսի 1-ից ոչ ուշ:

Հարց

ԱՀ երկքաղաքացին (այն անձը, որը ԱՀ քաղաքացիությունից բացի, ունի նաև այլ պետության (երկրների) քաղաքացիություն) եկամտային հարկով հարկման առումով դիտվում է որպես ԱՀ, թե՞ օտարերկրյա քաղաքացի:

Պատասխան

ԱՀ երկքաղաքացին եկամտային հարկով հարկման առումով ԱՀ-ի համար ճանաչվում է միայն որպես ԱՀ քաղաքացի:

Հարց

Աշխատողին վճարվող ժամանակավոր անաշխատունակության նպաստի գումարը ո՞ր ամսվա եկամտային հարկի հաշվարկում պետք է արտացոլել:

Պատասխան

«Եկամտային հարկի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ժամանակավոր անաշխատունակության նպաստի գումարները արտացոլվում են այն ամսվա եկամտային հարկի հաշվարկում, որ ամսում կատարվել է վճարումը: Օրինակ՝ վարձու աշխատողը մարտի 20-25-ը գտնվում է անաշխատունակ վիճակում և անաշխատունակության նպաստը վճարվում է ապրիլի 1-ին, ապա

անաշխատունակության նպաստը ներառվում է ապրիլ ամսվա եկամտային հարկի ամսական ամփոփ հաշվարկում:

Հարց

Նոր աշխատողի գրանցման հայտը ե՞րբ պետք է ներկայացվի հարկային մարմին:

Պատասխան

«Եկամտային հարկի մասին» օրենքի 14-րդ հոդվածի համաձայն՝ հարկային գործակալները նոր աշխատողի գրանցման հայտը հարկային մարմին են ներկայացնում նոր աշխատողին աշխատանքի ընդունելուց հետո, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ աշխատողի կողմից աշխատանքը փաստացի սկսելու օրվան նախորդող օրվա ավարտը, աշխատանքի ընդունելու օրն աշխատանքը փաստացի սկսելու դեպքում՝ մինչև աշխատանքի ընդունելու օրվա ժամը 14:00-ն:

Հարց

Եկամտային հարկի ամսական ամփոփ հաշվարկում ներառվո՞ւմ են արդյոք անձնավորված տեղեկություններ բանկային գաղտնիք հանդիսացող տեղեկությունների մասով (մասնավորապես՝ ֆիզիկական անձանց ավանդների դիմաց վճարված տոկոսներ և պահված եկամտային հարկ):

Պատասխան

Ոչ: Եկամտային հարկի ամսական ամփոփ հաշվարկում բանկային գաղտնիք հանդիսացող տեղեկատվության մասով ներկայացվում են միայն ամփոփ տեղեկություններ՝ առանց այդ եկամուտները ստացած ֆիզիկական անձանց անհատական տվյալները նշելու:

Հարց

Նոր աշխատողի գրանցման հայտը սահմանված ժամկետից ուշ ներկայացվելու կամ չներկայացվելու դեպքերում ինչպիսի՞ պատասխանատվություն է առաջանում:

Պատասխան

Նոր աշխատողի գրանցման հայտը սահմանված ժամկետից ուշ ներկայացվելու կամ չներկայացվելու դեպքերում, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ԼՂՀ օրենսգրքի համաձայն, առաջանում է վարչական պատասխանատվություն: Միաժամանակ այն դեպքում, երբ հարկային մարմնի կողմից իրականացվող ստուգմամբ հայտնաբերվում է փաստացի աշխատանք կատարող վարձու աշխատող, որի համար գրանցման հայտը չի ներկայացվել մինչև ստուգումը փաստացի սկսելու օրվան նախորդող օրվա ավարտը, գործատուն այդ վարձու աշխատողների համար վճարում է եկամտային հարկ՝ «Եկամտային հարկի մասին» օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված չափերով:

Հարց

2017թ. փետրվար ամսին գործադուրի ընդունած հրամանով հաշվարկվում են 2016թ. տարեկան արդյունքներով աշխատանքային պարտականությունները գերազանց կատարած աշխատողներին պարգևատրման գումարներ, որոնք

վճարվում են աշխատողներին մարտ ամսին: Հարկվող եկամտի որոշման ժամանակ ի՞նչ մեթոդով պետք է առաջնորդվել և ո՞ր ամսվա հաշվարկում պետք է արտացոլել առաջացած եկամտային հարկի պարտավորությունը:

Պատասխան

«Եկամտային հարկի մասին» օրենքի 14-րդ և 15-րդ հոդվածների համաձայն՝ եթե ընթացիկ ամսում գործատուի կողմից ընդունված իրավական ակտով հաշվարկվում է այդ ամսվան նախորդող ժամանակահատվածներում աշխատանքային պարտականությունները պատշաճ կատարելու, երկարամյա աշխատանքի և ծառայության համար պարգևատրման գումարներ, ապա այդ գումարներից եկամտային հարկը հաշվարկվում է՝ հաշվի առնելով ընթացիկ ամսվա աշխատավարձի գումարը՝ միասնականացված կարգով, և արտացոլվում է այդ (ընթացիկ) ամսվա՝ տվյալ պարագայում փետրվար ամսվա եկամտային հարկի ամսական ամփոփ հաշվարկում:

Հարց

Կազմակերպության կողմից կազմակերպված մրցույթի արդյունքներով հաղթողներին տրամադրվել են դրամական պարգևներ: Արդյո՞ք, հարկային գործակալը պետք է այդ գումարներից հաշվարկի և բյուջե փոխանցի եկամտային հարկ:

Պատասխան

«Եկամտային հարկի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի համաձայն՝ մրցույթներում և մրցություններում ստացված դրամական մրցանակների արժեքը՝ յուրաքանչյուր մրցանակի դեպքում 50 000 ՀՀ դրամը չգերազանցող չափով, համարվում է նվազեցվող եկամուտ: Գերազանցող մասը ենթակա է հարկման օրենքով սահմանված կարգով:

Հարց

Աշխատանքից ազատված վարձու աշխատողին վճարվել է արձակման նպաստ: Այդ գումարը ներառվո՞ւմ է, արդյոք, եկամտային հարկի ամսական ամփոփ հաշվարկում:

Պատասխան

«Եկամտային հարկի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ աշխատողին աշխատանքից ազատման դեպքում ԱՀ օրենսդրությամբ սահմանված չափերով վճարվող արձակման նպաստի գումարը համարվում է որպես նվազեցվող եկամուտ և չի ներառվում եկամտային հարկի ամսական ամփոփ հաշվարկում:

Հարց

Աշխատողին վճարվող ժամանակավոր անաշխատունակության նպաստի գումարը ո՞ր ամսվա եկամտային հարկի հաշվարկում պետք է արտացոլել:

Պատասխան

«Եկամտային հարկի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ժամանակավոր անաշխատունակության նպաստի գումարները արտացոլվում են այն

ամսվա եկամտային հարկի հաշվարկում, որ ամսում կատարվել է վճարումը: Օրինակ՝ վարձու աշխատողը մարտի 20-25-ը գտնվում է անաշխատունակ վիճակում և անաշխատունակության նպաստը վճարվում է ապրիլի 1-ին, ապա անաշխատունակության նպաստը ներառվում է ապրիլ ամսվա եկամտային հարկի ամսական ամփոփ հաշվարկում:

Հարց

Հաստատագրված վճարների կամ առևտրի հարկի հարկման ռեժիմներով հարկվող անհատ ձեռնարկատերերի կողմից եկամտային հարկով հարկվող օբյեկտը որոշելիս հաշվարկված հաստատագրված վճարի կամ առևտրի հարկի գումարը նվազեցվում է արդյոք համախառն եկամտից:

Պատասխան

Եկամտային հարկով հարկվող օբյեկտը որոշելիս համախառն եկամտից նվազեցումների տեսակները սահմանվում են «Եկամտային հարկի մասին» օրենքով: Ըստ այդմ, եկամտային հարկով հարկվող օբյեկտը որոշելիս հաշվարկված հաստատագրված վճարի կամ առևտրի հարկի գումարները համախառն եկամտից նվազեցման ենթակա չեն:

Հարց

Հասարակական կազմակերպության կողմից ֆիզիկական անձին կրթաթոշակ տրամադրելիս առաջանում է արդյոք եկամտային հարկի պարտավորություն:

Պատասխան

«Եկամտային հարկի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի համաձայն՝ նվազեցվող եկամուտներ են համարվում բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողներին, ասպիրանտներին, միջնակարգ-մասնագիտական ու պրոֆեսիոնալ-տեխնիկական ուսումնական հաստատությունների սովորողներին, հոգևոր ուսումնական հաստատությունների ունկնդիրներին պետության կողմից վճարված, ինչպես նաև այն կրթաթոշակները, որոնք նրանց համար նշանակում են այդ ուսումնական հաստատությունները կամ վերոնշյալ հոդվածի 1-ին մասի 14-րդ և 15-րդ կետերում նշված կազմակերպությունները: Այսինքն, հասարակական կազմակերպության կողմից ֆիզիկական անձին նշանակված կրթաթոշակը նվազեցվող եկամուտ է հանդիսանում, և եկամտային հարկի պարտավորություն չի առաջանում:

Հարց

Քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում աշխատանքների կատարման դիմաց ֆիզիկական անձանց վճարվող եկամուտներից հարկային գործակալը եկամտային հարկը ե՞րբ է վճարում պետական բյուջե:

Պատասխան

«Եկամտային հարկի մասին» օրենքի 15-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում աշխատանքների կատարման (ծառայությունների մատուցման) դիմաց ֆիզիկական անձանց վճարվող եկամուտներից հարկային գործակալը եկամտային հարկը պահում և բյուջե է վճարում եկամտի վճարման ամսվան հաջորդող ամսվա 20-ից ոչ ուշ:

Հարց

Կազմակերպությունում մինչև վեց ամիս աշխատած աշխատողին՝ աշխատանքից ազատվելու դեպքում վճարվում է արդյո՞ք չօգտագործված արձակուրդի համար հատուցում:

Պատասխան

Աշխատանքային օրենսգրքի 170-րդ հոդվածի համաձայն՝ մինչև վեց ամիս աշխատած աշխատողների հետ աշխատանքային պայմանագիրը լուծվելու դեպքում գործատուն չօգտագործված ամենամյա արձակուրդի համար աշխատողին վճարում է դրամական հատուցում, որի չափը որոշվում է տվյալ ժամանակահատվածի համար տրամադրման ենթակա ամենամյա արձակուրդի չօգտագործված օրերի քանակով:

Հարց

Հնարավո՞ր է արդյոք ներկայացնել եկամտային հարկի ճշգրիտ հաշվարկ այն հաշվետու ժամանակաշրջանի համար, որից անցել է երեք տարի:

Պատասխան

«Հարկերի մասին» օրենքի 31-րդ հոդվածի համաձայն՝ այն հաշվետու ժամանակաշրջանի համար, որից անցել է երեք տարի, հաշվարկներ, հայտարարագրեր և հաշվետվություններ (այդ թվում՝ ճշտված) չեն կարող ներկայացվել:

Հարց

Ընկերության հիմնադիր հանդիսացող ԱՀ քաղաքացու կողմից կատարվել է ներդրում և ավելացվել է կանոնադրական կապիտալը շինության տեսքով, որը գրանցվել է պետական ռեգիստրի տարածքային ստորաբաժանումում՝ գնահատված արժեքի չափով: Արդյո՞ք ընկերությունը որպես հարկային գործակալ գնահատված արժեքից պետք է պահի եկամտային հարկ:

Պատասխան

«Եկամտային հարկի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 17-րդ կետի համաձայն՝ իրացում (վաճառք) չի համարվում առևտրական կազմակերպությունների կանոնադրական կապիտալում ֆիզիկական անձի կողմից սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքի ներդրումը և այդ գույքի արժեքից չի հաշվարկվում եկամտային հարկ:

Հարց

Աշխատանքային պայմանագիրը լուծվելու դեպքում ինչպե՞ս է կատարվում վերջնահաշվարկը:

Պատասխան

Աշխատանքային պայմանագիրը լուծվելու դեպքում գործատուն պարտավոր է աշխատողի հետ կատարել լրիվ վերջնահաշվարկ աշխատանքային պայմանագրի լուծման օրը, եթե Աշխատանքային օրենսգրքով, օրենքով կամ գործատուի և աշխատողի համաձայնությամբ վերջնահաշվարկի այլ կարգ նախատեսված չէ: Գործատուն վերջնահաշվարկի օրը պարտավոր է աշխատողին վճարել աշխատավարձը և դրան հավասարեցված այլ վճարումներ, սահմանված կարգով լրացնել աշխատողի աշխատանքային գրքույկն ու հանձնել նրան: Ֆիզիկական անձ

գործատուի մահվան դեպքում վերջնահաշվարկ կատարելու պարտականությունը փոխանցվում է ժառանգությունն ընդունողներին (ժառանգների բացակայության կամ ժառանգների կողմից ժառանգությունն ընդունելուց հրաժարվելու դեպքում այն անձին կամ մարմնին, որն ընդունում է այդ գույքը՝ դրա արժեքի սահմաններում): Եթե աշխատողը նույն գործատուի մոտ փոխադրվում (տեղափոխվում) է այլ աշխատանքի, գործատուն աշխատողի հետ վերջնահաշվարկ չի կատարում:

Հարց

Հիմնական աշխատանքի վայրից մինչև 30 կմ հեռավորությամբ այլ վայր մեկնելու դեպքում գործուղվող աշխատողին հատուցվում են արդյոք օրապահիկի ծախսերը:

Պատասխան

ԼՂՀ կառավարության 2006 թվականի մարտի 28-ի «Գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցման համար կատարվող վճարումների նվազագույն և առավելագույն չափերն ու վճարման կարգը սահմանելու մասին» N 164 որոշման համաձայն՝ հիմնական աշխատանքի վայրից մինչև 30 կմ հեռավորությամբ այլ վայր մեկնելու դեպքում գործուղվող աշխատողին հատուցվում է միայն գործուղման ճանապարհածախսը:

Հարց

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրական կապիտալում ֆիզիկական անձին պատկանող բաժնեմասի օտարման դեպքում առաջանում է արդյոք որևէ հարկային պարտավորություն:

Պատասխան

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրական կապիտալում ֆիզիկական անձին պատկանող բաժնեմասի նկատմամբ սեփականության իրավունքի այլ անձի փոխանցման գործարքի մասով տվյալ ֆիզիկական անձը որևէ հարկային պարտավորություն չի կրում: Մասնավորապես,

«Եկամտային հարկի մասին» օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ բաժնետոմսերի կամ ներդրում վկայող այլ արժեթղթերի օտարումից ֆիզիկական անձանց ստացված եկամուտը եկամտային հարկով հարկման առումով դիտվում է որպես նվազեցում (եկամտային հարկով հարկման ենթակա չէ):

«Ավելացված արժեքի հարկի մասին» օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրական կապիտալում անձին պատկանող բաժնեմասի նկատմամբ սեփականության իրավունքի այլ անձի փոխանցումը ԱԱՀ-ով հարկման օբյեկտ չի համարվում:

Հարց

Եկամտային հարկով հարկման ենթակա՞ են արդյոք ԱՀ ֆիզիկական անձանց կողմից ստացված շահաբաժինները:

Պատասխան

«Եկամտային հարկի մասին» օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եկամտային հարկով հարկվող եկամուտը որոշելիս ֆիզիկական անձանց ստացած

շահաբաժինների գումարը նվազեցվում է համախառն եկամտից (եկամտային հարկով չի հարկվում):

Հարց

Հարկային գործակալի կողմից աշխատողին վճարվող եկամուտներից արհեստակցական կազմակերպություններին մասհանվող գումարները ներառվում են արդյոք եկամտային հարկի հաշվարկման օբյեկտում:

Պատասխան

Այո: «Եկամտային հարկի մասին» օրենքի համաձայն՝ եկամտային հարկով հարկվող օբյեկտը որոշելիս արհեստակցական կազմակերպություններին մասհանվող գումարները համախառն եկամտից նվազեցման ենթակա չեն:

Հարց

Կազմակերպության և ֆիզիկական անձի միջև կնքված հանձնարարության պայմանագրի համաձայն կազմակերպությունը ապրանքների վաճառքից ստացված գումարները ֆիզիկական անձ հանձնարարողին վճարելու դեպքում կրում է արդյոք հարկային գործակալի պարտականություններ:

Պատասխան

Կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը ֆիզիկական անձանց եկամուտներ վճարելիս եկամտային հարկի պահում (գանձում) չեն իրականացնում, եթե նրանք հանդիսանում են հանձնակատար և հանձնարարության պայմանագրի շրջանակներում այլ անձանցից ստացված գումարները վճարում են հանձնարարող ֆիզիկական անձանց:

Հարց

Վարձու աշխատողներին վճարված օգնության գումարներից պահվում է արդյոք եկամտային հարկ և արտացոլվում եկամտային հարկի հաշվարկում:

Պատասխան

Վարձու աշխատողներին վճարված միանվագ օգնության գումարներից, բացառությամբ աշխատողի կամ աշխատողի ընտանիքի որևէ անդամի մահվան դեպքում միանվագ կարգով տրված օգնության գումարների, հարկային գործակալը պահում է եկամտային հարկ՝ 15 տոկոս դրույքաչափով և ներառում եկամտային հարկի ամսական ամփոփ հաշվարկի 1.8՝ «Այլ հարկվող եկամուտ» սյունակում:

«Եկամտային հարկի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի համաձայն՝ աշխատողի կամ աշխատողի ընտանիքի որևէ անդամի մահվան դեպքում միանվագ կարգով տրված օգնության գումարները հանդիսանում են նվազեցվող եկամուտ այդ գումարը ստացող աշխատողի կամ նրա ընտանիքի անդամի համար և եկամտային հարկի ամսական ամփոփ հաշվարկի մեջ չեն ներառվում:

Հարց

Բանկը վարկառու ֆիզիկական անձի վարկային պարտավորությունների ներման (զիջման) դեպքում կրում է արդյոք հարկային գործակալի պարտականություններ:

Պատասխան

«Եկամտային հարկի մասին» օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ համախառն եկամուտը հաշվետու ժամանակաշրջանում հարկ վճարողի կողմից ստացման ենթակա՝ հաշվեգրված (պասիվ եկամուտների, ինչպես նաև անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց մասով՝ քաղաքացիաիրավական պայմանագրերի շրջանակներում ստացված) բոլոր եկամուտների հանրագումարն է: Նույն օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ համախառն եկամտից նվազեցվող եկամուտներ են դիտվում ստացվող վարկերի և փոխառությունների գումարները, բացառությամբ պարտատիրոջ կողմից վարկի կամ փոխառության գումարների զիջման կամ որևէ այլ ձևով այդ գումարները չվերադարձնելու մասին պարտատիրոջ հետ համաձայնության (այդ թվում՝ օրենքով սահմանված հայցային վաղեմության ժամկետը լրանալու պահին): Այլ կերպ, վարկառու ֆիզիկական անձին ներված (զիջված) վարկի գումարներից բանկը որպես հարկային գործակալ աղբյուրի մոտ պետք է պահի և ԼՂՀ պետական բյուջե փոխանցի եկամտային հարկ՝ 15 տոկոս դրույքաչափով, իսկ ներված (զիջված) տոկոսների, տույժերի և տուգանքների գումարներից եկամտային հարկ չի պահվում:

Հարց

Կազմակերպությունը՝ որպես հարկային գործակալ, կրո՞ւմ է եկամտային հարկի պարտավորություն անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձից վարձակալված անշարժ գույքի վրա կատարված վերանորոգումների գումարի չափով:

Պատասխան

Կազմակերպության կողմից անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձից վարձակալված անշարժ գույքի վրա կատարված ընթացիկ և հիմնական (կապիտալ) վերանորոգումների գումարները, վարձակալական պայմանագրի համաձայն, վարձատուի կողմից չփոխհատուցվելու դեպքում՝ կազմակերպությունը՝ որպես հարկային գործակալ, կատարված *ընթացիկ* վերանորոգումների գումարի չափով եկամտային հարկի պարտավորություն չի կրում, իսկ *հիմնական (կապիտալ)* վերանորոգումների մասով՝ վարձակալական պայմանագրի փաստացի լուծման դեպքում չամորտիզացված մասի (հարկման նպատակով որոշվող մնացորդային գումարի) համար որպես հարկային գործակալ պետք է պահի և մինչև պայմանագրի լուծման ամսվան հաջորդող ամսվա 20-ը պետական բյուջե փոխանցի եկամտային հարկ՝ 15 տոկոս դրույքաչափով:

Հարց

Արձակման նպաստից պահվո՞ւմ է, արդյոք, եկամտային հարկ:

Պատասխան

«Եկամտային հարկի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրության համաձայն վճարված նպաստների գումարները (բացառությամբ ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների գումարների) համարվում են համախառն եկամտից նվազեցվող եկամուտներ (եկամտային հարկ չի պահվում):

Հարց

Կազմակերպությունը հսկիչ-դրամարկղային մեքենաների կտրոններով ձեռքբերումների մասով արդյո՞ք կրում է եկամտային հարկի պահման պարտավորություն:

Պատասխան

Ոչ: «Եկամտային հարկի մասին» օրենքի 11-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը հսկիչ-դրամարկղային մեքենաների կտրոններով, ինչպես նաև կրճատ հաշիվ-ապրանքագրերով ձեռքբերումների մասով՝ անկախ դրանց չափից, ազատվում են որպես հարկային գործակալ եկամտային հարկը պահելու և բյուջե վճարելու պարտավորությունից:

Հարց

Աշխատակցին աշխատանքից ազատելու դեպքում վճարվող վերջնահաշվարկի գումարը եկամտային հարկի ամփոփ հաշվարկում ներկայացվում է հաշվեգրման մեթոդով, թե՛ վճարման:

Պատասխան

Հարկային գործակալը եկամտի վճարման աղբյուրի մոտ պահված (զանձված) հարկը պետական բյուջե է փոխանցում ֆիզիկական անձանց բազային եկամտի (աշխատավարձ և դրան հավասարեցված եկամուտներ) հաշվարկման (հաշվեգրման), իսկ այլ եկամուտների դեպքում՝ այդ եկամուտների վճարման ամսվան հաջորդող ամսվա 20-ից ոչ ուշ: Տվյալ դեպքում բազային եկամտի մեջ ներառված են նաև աշխատանքից ազատվելու դեպքում չօգտագործված արձակուրդի փոխհատուցման վճարները, որոնք եկամտային հարկի ամսական ամփոփ հաշվարկում արտացոլվում են հաշվեգրման մեթոդով:

Հարց

Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների գումարը ե՞րբ պետք է արտացոլվի եկամտային հարկի ամփոփ հաշվարկում:

Պատասխան

Վարձու աշխատողներին վճարված ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների գումարները ներառվում են նրա համախառն եկամտի մեջ որպես այն ամսվա եկամուտ, երբ վճարվել են այդ նպաստները: Ընդ որում, «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դրանք ենթակա են վճարման անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելուց հետո՝ առաջիկա աշխատավարձի վճարման համար օրենսդրությամբ սահմանված ժամկետում:

Հարց

Հնարավո՞ր է արդյոք մինչև հաշվետու ժամանակահատվածի ավարտը տվյալ հաշվետու ժամանակահատվածի համար ներկայացնել եկամտային հարկի ամփոփ հաշվարկ:

Պատասխան

Մինչև հաշվետու ժամանակաշրջանի ավարտը եկամտային հարկի ամփոփ հաշվարկը հանձնելու դեպքում, այն համարվում է չընդունված:

Հարց

Վարձու աշխատողը հերթափոխով ամսվա ընթացքում աշխատում է 15 օր: Ամենամյա արձակուրդային գումարը հաշվարկելիս միջին օրական աշխատավարձը ինչպե՞ս է հաշվարկվում:

Պատասխան

ԼՂՀ Աշխատանքային օրենսգրքի 195-րդ հոդվածի համաձայն՝ հնգօրյա աշխատանքային շաբաթվա դեպքում միջին օրական աշխատավարձի չափը որոշվում է՝ միջին ամսական աշխատավարձը բաժանելով 21-ի: Վեցօրյա աշխատանքային շաբաթվա դեպքում միջին օրական աշխատավարձի չափը որոշվում է՝ միջին ամսական աշխատավարձը բաժանելով 25-ի:

Հարց

Գործատուների կողմից իրենց վարձու աշխատողների համար վճարվող առողջության ապահովագրական վճարները համարվո՞ւմ են արդյոք եկամտային հարկով հարկման օբյեկտ:

Պատասխան

«Եկամտային հարկի մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետի համաձայն՝ գործատուների կողմից իրենց վարձու աշխատողների առողջության ապահովագրության համար կատարված ապահովագրավճարները՝ յուրաքանչյուր վարձու աշխատողի համար եկամտի ստացման յուրաքանչյուր ամսվա հաշվով մինչև տասը հազար դրամի չափով հանդիսանում են նվազեցվող եկամուտ (եկամտային հարկով հարկման ենթակա չեն), իսկ նշված չափը գերազանցելու դեպքում՝ գերազանցող մասը ենթակա է հարկման՝ 15 տոկոս դրույքաչափով:

Հարց

Ինչպե՞ս է իրականացվում հարկային գործակալի կողմից ֆիզիկական անձանց վճարված եկամուտներից ժամանակին չպահված եկամտային հարկի գումարի պահումը:

Պատասխան

«Եկամտային հարկի մասին» օրենքի 25-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հարկային գործակալի կողմից ֆիզիկական անձանց վճարվող եկամուտներից ժամանակին չպահված (կամ պակաս պահված) հարկի գումարները ֆիզիկական անձանցից ԱՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կարող են պահվել ոչ ավելի, քան վերջին երեք ամսվա համար, իսկ հարկի սահմանված չափից ավելի պահված գումարները հաշվանցվում են առաջիկա պահումների հաշվին կամ վերադարձվում են այդ մասին հայտնի դառնալու օրվանից մեկ ամսվա ընթացքում՝ սահմանված չափից ավելի գանձման օրվան հաջորդող երեք օրացուցային տարվա համար:

Հարց

ԱՀ քաղաքացին սեփականության իրավունքով իրեն պարկանող բնակարանը վաճառում է ԱՀ ռեզիդենտ կազմակերպությանը: Առաջանո՞ւմ է արդյոք եկամտային հարկ ԱՀ քաղաքացուն վճարվող եկամտից:

Պատասխան

«Եկամտային հարկի մասին» օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ կազմակերպությունը պարտավոր է, որպես հարկային գործակալ, ֆիզիկական անձից բնակարան ձեռք բերելու դիմաց վճարվող եկամտից հաշվարկել և պահել եկամտային հարկ՝ 6 տոկոս դրույքաչափով:

Հարց

Օտարերկրացին Արցախի Հանրապետության տարածքում սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը վաճառել է Արցախի Հանրապետությունում գրանցված առևտրային կազմակերպությանը՝ 50.0 հազ. դրամ արժեքով: Ընդ որում՝ օտարերկրացու կողմից այդ գույքի ձեռքբերման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված հիմնավորող որևէ փաստաթուղթ բացակայում է: Կատարված գործարքի դիմաց եկամտային հարկ հաշվարկվում է:

Պատասխան

«Եկամտային հարկի մասին» օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝ քանի որ բացակայում են օտարերկրացու կողմից այդ գույքի ձեռքբերման վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթերը, օտարերկրացու կողմից գույքի օտարումից ստացած ամբողջ արժեքը (50.0 հազ. դրամ) համարվում է Արցախի Հանրապետության աղբյուրներից ստացված եկամուտ, որից առևտրային կազմակերպությունը հաշվարկելու է եկամտային հարկ՝ 10 տոկոս դրույքաչափով:

Հարց

Անհատ ձեռնարկատերը հաշվեքու տարվա ընթացքում ապրանքներ է մատակարարել տարբեր կազմակերպությունների և դուրս գրել հարկային հաշիվներ, սակայն այդ տարվա ընթացքում մատակարարված ապրանքների դիմաց վճարումները, կնքված պայմանագրերի համաձայն, գնորդ կազմակերպությունները կատարելու են հաջորդ տարվա հունվարին: Հանդիսանում է արդյոք անհատ ձեռնարկատերը տարեկան եկամուտների մասին հաշվարկ ներկայացնող, եթե հաշվեքու տարվա ընթացքում նա չի ստացել հայտարարագրման ենթակա այլ եկամուտներ:

Պատասխան

Քանի որ, «Եկամտային հարկի մասին» օրենքի 17-րդ հոդվածի համաձայն, անհատ ձեռնարկատերը ձեռնարկատիրական գործունեությունից հարկվող եկամտի որոշման ժամանակ կիրառում է եկամուտների և ծախսերի հաշվառման հաշվեգրման եղանակը, այսինքն՝ ելնելով իր կողմից այդ եկամուտների ստացման իրավունքը ձեռք բերելու կամ դրա համար այդ ծախսերը ճանաչելու պահից, անկախ եկամտի փաստացի ստացման կամ վճարումների իրականացման ժամկետից, ուստի նա հանդիսանում է տարեկան եկամուտների մասին հաշվարկ ներկայացնող և ձեռնարկատիրական գործունեությունից հաշվեգրված եկամուտներից հարկվող եկամուտը որոշելով՝ հաշվարկում և բյուջե է փոխանցում եկամտային հարկը:

Հարց

Օտարերկրացու կողմից ներդրում է կատարվել Արցախի Հանրապետությունում գրանցված առևտրային կազմակերպության կանոնադրական կապիտալում՝ Արցախի Հանրապետությունում ձեռք բերված գույքի ձևով: Օտարերկրացու կողմից այդ գույքը ձեռք է բերվել 100.0 հազ. դրամ արժեքով, իսկ առևտրային

կազմակերպության կանոնադրական կապիտալում ներդրում կատարելիս այն գնահատվել է 140.0 հազ. դրամի չափով: Նշված գործարքների վերաբերյալ առկա են օրենսդրությամբ սահմանված հիմնավորող փաստաթղթեր: Կատարված գործարքի դիմաց ստացված գումարը եկամտային հարկով հարկման առումով համարվում է, արդյոք, եկամուտ:

Պատասխան

Տվյալ դեպքում «Եկամտային հարկի մասին» օրենքի 12-րդ հոդվածի համաձայն՝ ներդրված գույքի գնահատման և ձեռքբերման արժեքներից առաջացած դրական տարբերությունը ($140.0 - 100.0 = 40.0$ հազ. դրամ) օտարերկրացու համար համարվում է Արցախի Հանրապետության աղբյուրներից ստացված եկամուտ, որից պետք է հաշվարկվի եկամտային հարկ: